ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Գավառի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար Գավառի Մշակույթի տուն ՀՈԱԿ-ի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԳՄԳՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի սեպտեմբերի 10-ին կնքված N ԳՄԳՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/2 ծածկագրով պայմանագրում 2021 թվականի հոկտեմբերի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1	*Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար նախատեսված ժամկետների երկարաձգման անհրաժեշտություն:*
Փոփոխության առաջացման պատճառ N 2	*Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար նախատեսված ժամկետները երկարաձգել 30 օրացույցային օրով, այն սահմանելով մինչև 06.02.2022 թվականը:*
Փոփոխության նկարագրություն	*Փոփոխությունը կցվում է (scan):*
Փոփոխության հիմնավորում	*ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետ, Պայմանագրի 8.5 և 8.6 կետեր*

Պատվիրատու՝ *ԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

10/09/2021թ. ԿՆՔՎԱԾ N ԳՄԳՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Գավառ «29» հոկտեմբերի 2021թ.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի քաղաքապետարանը, ի դեմս Գուրգեն Մարտիրոսյանի, որը գործում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա (այսուհետեւ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Արամ Սարգսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով կողմերի միջև 10.09.2021թ. կնքված N ԳՄԳՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/2 ծածկագրով գնման պայմանագրի 8.6 կետի դրույթները և 29.10.2021 թվականի «Քյավառ Սերվիս» ՍՊ Ընկերության գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1.1 Համաձայն 29/10/2021 թվականի «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ի կողմից ստացված գրության և պայմանագրի 8.6 կետի՝ երկարաձգել պայմանագրի կատարման ժամկետը 30 օրացույցային օրով:

1.2 Հիմք ընդունելով սույն համաձայնագրի 1.1 կետը Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանել մինչև 06/02/2022 թվականը ներառյալ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 /մեկ/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագիրը համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

2.4 Սույն համաձայնագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Գավառի քաղաքապետարան
1201, ք.Գավառ, Գր. Լուսավորչի 12
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900172162027
ՀՎՀՀ 08406333

Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ _____
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Քյավառ Սերվիս» ՍՊԸ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Գավառ,
Ազատության 41/5
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 163048126854
ՀՎՀՀ 08420926

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ _____
/ստորագրություն/
Կ.Տ.